ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ,

«Արարատ»ի տարւոյս հոկտեմբերի համարում առանձին յաւելուածով տպագրուած է Յոբելենական հանդէսների նկարագրութիւնը, որի մէջ յիշատակուած են այն բոլոր պատգամաւորներն ու հեռագրները, որոնք տօնի առթիւ ուղարկուած են եղել ս. Էջմիածին։ Սակայն ոչ մի տեղ յիշատակուած չէ, թէ այդ Մեծ Տօնին մասնակից է եղել նաև Տագանրոգի հայ համայնքը, որը յատուկ հեռագրով խնդրել էր ինձնից՝ տեղի հայ գաղութի զգացմանց թարգման հանդիսանալ Նորին Վեհափառութեան Ազգի Սրբազնագոյն Հայրապետի առաջ։ Այդ հեռագիրը յանձնել եմ Յոբելենական Յանձնաժողովի քարտուղար պարձ. Տէր Գէորգ վարդ. Չէօրէքչեանին։

Մուշէ վարդապետ

16/XI, 13 թ.
ս. Էջմիածին.